

4-76

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՓՈԼԱԴՅԱՆ ԱՐՇԱԿ ՊՈԴՈՍԻ

ՔՐԴԵՐԸ ԱՔԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
X - XI ԴԴ

E.00.02

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵԼԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՄԵՂՍԱԳԻՐ

*Արթուր Բաբայան և Կարեն Բաբայան
Համալսարանի Գիտությունների ինստիտուտի
Գիտական կենտրոնի Գիտական ասիստանտ*

ԵՐԵՎԱՆ - 1996 թ. 26. 11. 96թ.

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության

ինստիտուտում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱՆՈՄՆԵՐ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր ԶՈՒԼԱԼՅԱՆ Մ. Կ.

Պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ.

Պատմական գիտությունների դոկտոր ՍԱՐԳՍՅԱՆ Հ. Գ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Երևանի պետական համալսարանի Արևելագիտության
ֆակուլտետի արարագիտության ամբիոն:


Պաշտպանությունը տեղի կունենա 1996 թ. հոկտեմբերի 26-ին
ժամը 13-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական
աստիճաններ շնորհող պատմության բնագավառի 006
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, Մարշալ
Բաղրամյան պող. 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրը առաքված է 1996 թ. հոկտեմբերի 25-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,,

պատմական գիտությունների թեկնածու

 (Ա.Վ. Քոսյան)

✓

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Զրդերի X-XI դդ.
պատմությունն իրավամբ համարվում է Արքայան խալիֆայության
հպատակ երկրների և ժողովուրդների պատմության բաղկացուցիչ
մասը:

Լինելով արաբամանեղական ժամանակաշրջանի պատմու-
թյան թերևս ամենահետաքրքրական փուլերից մեկը՝ այն նշանավորվեց
ռազմաքաղաքական բուռն իրադարձություններով և սոցիալ-տնտե-
սական խոր փոփոխություններով:

Ժամանակաշրջանը մասնավորապես առանձնանում է նրանով,
որ զանգվածաբար ընդունելով իսլամը, քրդական ցեղերն, ավատա-
տեր վերնախավի գլխավորությամբ, առաջին անգամ փորձ կատա-
րեցին հարարերական համալսարժառության, որի շնորհիվ
պատմության քառերաբեմում իրար հետևից հանդես եկան քրդական
անկախ և կիսանկախ դինաստիաներ, որոնք լինելով ավատատի-
րական ժամանակավոր կազմավորումներ և ռազմաքաղաքական
որոշակի պայմանների արդյունք, աստիճանաբար կազմալուծվեցին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնական առանձնա-
հատկություններից մեկն էլ այն է, որ խալիֆայության տարբեր
փայրերում իր քաղաքական և տնտեսական դիրքերն ամրապնդելու և
սզդեցության ոլորտն ընդլայնելու լուրջ միտումներ դրսևորող
քրդական ցեղային վերնախավը գրեթե ամբողջությամբ անցավ
իսլամի ծառայության, դրանով իսկ նպատակելով ոչ միայն
ցեղակիցների նոր տեղաշարժերին, այլև այսպես կոչված
արաբամանեղական հասարակական-քաղաքական և մշակութային
կյանքի ոլորտներում նրանց ներգրավմանը:

X-XI դդ. քրդական ցեղերի նման աննախադեպ և շեշտակի
ակտիվացումն սերտորեն կապված էր այնեից առաջ Մերձավոր և
Միջին Արևելքում ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական այն
խորը ճգնաժամի հետ, որը դեռևս IX դ. կեսերից սկսեց սպրդել
Բաղդադի Արքայան արքունիքը: Տարբեր նահանգներում հիշյալ
շրջանից սկիզբ առած ժողովրդական խռչոք շարժումները,
հակաարաբական և հակաավատատիրական պայքարը, ինչպես նաև
տեղական կառավարիչների անջատողական նկրտումները և
ավատատիրական շահագործման աստկացումն ու դրա հետևանքով
հասարակության ծայր աստիճան շերտավորումը մեծապես
խարխլեցին արաբական աշխարհակարության դիրքերը:

IX-X դդ. հպատակ ժողովուրդների, մասնավորապես
իրանական տարրի՝ շիականության դրոշի ներքո մղած հակաար-
քայան տևական պայքարն, այնուամենայնիվ, շոշափելի հաջողու-
թյուն արձանագրեց: 945թ. իրանական Բուիների (ժազումով դելմիկ,
դայլամի) կողմից Բաղդադի նվաճումից հետո Արքայան արքունիքը

շուրջ երկու դար գրկվեց քաղաքական իշխանությունից և արևելյան խալիֆայության անժայռածիր տարածքներում ճանաչվեց միայն նրա հոգևոր իշխանությունը:

Իրանական տարրի ակտիվացումը նոր լիցք հաղորդեց նաև տարբեր նահանգներում քրդական ցեղերի ռազմաքաղաքական գործողություններին: Այս շրջանից սկսած մինչև XI դ. սելջուկ-քյուրքերի երևան գալը Մերձավոր և Միջին Արևելքում, պատմական հանգամանքների բերումով, քրդերը կամա թե՛ ակամա գործուն շփումներ հաստատեցին մահմեդական իշխանությունների հետ՝ առանձին վայրերում ձեռք բերելով քաղաքական որոշակի ինքնուրույնություն:

XI դ. 20-30-ական թվականներից հեռավոր Միջին Ասիայից դեպի արևելյան խալիֆայության տարածաշրջան սկիզբ առավ քյուրքական վայրագ ցեղերի՝ քափառող օղոզների հզոր շարժումը, որը նույն դարի 40-ականներին հող նախապատրաստեց սելջուկ-քյուրքերի ավերիչ աշավանքների համար: Մերձավոր և Միջին Արևելքում սելջուկ-քյուրքերի երևան գալն ու երկարատև տիրապետությունը բախտորոշ փուլ հանդիսացավ տարածաշրջանի երկրների և ժողովուրդների կյանքում:

Բոչվորական նոր աշխարհակառքության լուծը դաժան և սուկալի եղավ խալիֆայության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև քրդերի համար: Աստիճանաբար գրավելով քրդական շրջանները նույնպես, սելջուկ-քյուրքերի հուժկու հարվածների հետևանքով իրար հետևից քայքայվեցին նաև քրդական դինաստիաները:

Քրդերի պատմության այս ուշագրավ, բայց միաժամանակ բարդ և ռազմաքաղաքական բազում իրադարձություններով լի ժամանակաշրջանն առ այսօր լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել արևելագետների կողմից: Արևելյան և եվրոպական լեզուներով հրատարակի վրա եղած հրատարակություններում գլխավորապես լուսարանվում են քրդերի նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության հիմնախնդիրները: Գա բացատրվում է նախ և առաջ նրանով, որ ցարդ անհրաժեշտ չափով շրջանառության մեջ չեն դրվել քրդերի միջնադարյան պատմության ուսումնասիրությանը նպաստող տարաբնույթ սկզբնաղբյուրների հաղորդումները:

Դիշու է, որ վերջին շրջանում այս բացը լրացնելու ուղղությամբ թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում փորձիշատե տեղաշարժեր նկատվում են, այնուամենայնիվ, կատարված աշխատանքը գոհացուցիչ համարել չի կարելի:

Քրդերի X-XI դդ. պատմության ուսումնասիրությունն ինքնին ուշագրավ է: Այն հետաքրքրական է նաև մերօրյա մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող բուռն իրադարձությունների,

հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների պատմական նախադրյալներն առավել ճշգրիտ մեկնաբանելու գիտական տեսակետից:

Խնդրո առարկա թեման խիստ այժմեական է ոչ միայն քրդերի պատմական զարգացման փուլերն ուրվագծելու, այլև՝ մերձավորարևելյան մի շարք երկրներում արդի քրդական հիմնախնդիրը օբյեկտիվորեն գնահատելու և դրա պատմական արժանատիքը լուսարանելու տեսակետից նույնպես: Այն միաժամանակ բացառիկ կարևոր նշանակություն ունի հայազգիական համալիր ուսումնասիրություն-ների համար, քանի որ հայերը և քրդերը հնուց ի վեր դրացի ժողովուրդներ են և շատ հարցերում նրանց պատմությունը միահյուսված կամ խաչաձևված է:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական բարենպաստ պայմանների հետևանքով սկիզբ առավ քրդական ցեղերի ռազմագաղթը դեպի հյուսիս, դեպի պատմական Հայաստանի հարավ-արևմտյան շրջանները: Հետագայում, XV-XVI դդ., այդ ռազմագաղթը, հատկապես քուրք-իրանական հսկամարտությունների ընթացքում, սուննիզմի դրոշի ներքո կողմնորոշվելով դեպի Օսմանյան Թուրքիան, հող նախապատրաստեց քրդական ցեղերի խոշոր զանգվածների՝ Կենտրոնական Հայաստանի լեռնային շրջաններ ներթափանցելու համար: Ապա, ավելի ուշ, XIX-XX դդ. հայկական կոտորածներից հետո, աստիճանաբար նրանք վերաբնակվեցին Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքի վրա:

Ժամանակակից բուրդ մտավորականությունը խեղաթյուրելով պատմական իրողությունները՝ ակախիվ քարոզչություն է ձեռնարկել՝ փորձելով Արևմտյան Հայաստանը դիտարկել իբրև քրդական Էթնոսի ձևավորման բնօրրան՝ քրդերի պատմական հայրենիք: Նման քարոզչության սնանկությունը ցույց տալու, պատմական իրողությունը փաստելու հանգամանքներն իրենց հերքին մերկա թեմայի ընտրությունն ավելի այժմեական են դարձնում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՐՁԱՆԱԿՆԵՐՆ

ընդգրկում են մտավորապես երկհարյուրամյա պատմություն՝ X դ. առաջին կեսից սկսած մինչև XI դ. վերջը՝ Մեծ սելջուկների տիրապետության ժամանակաշրջանը: Այն լիովին համապատասխանում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության պարբերացմանը:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ. Ներկա ատենախոսությունը,

հանդիսանալով հեղինակի նախորդ գործերի շարունակությունը, իր հարցադրումներով և բարձրացված եիմնախնդիրներով, փաստորեն, արևելագիտության կողմից առաջին փորձն է քրդերի՝ Արբասյան խալիֆայության ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ: Այդ մասին մեզ հասած նյութերը, որոնց բացարձակ մեծամասնությունը վերաբերում է ռազմաքաղաքական անցուղարձեղին, գլխավորապես արտացոլվել են միջնադարյան արարվելգու պատմական, աշխարհագրական և այլ կարգի աղբյուրներում, որոնց զգալի մասը չի դրվել գիտական շրջանառության մեջ:

Արարվելգու և հարևան այլ ժողովուրդների սկզբնաղբյուրների ուսումնասիրության շնորհիվ առաջին անգամ ի մի են բերվել աշխարհագրական հսկա զանգվածում ցրված քրդերի X-XI դդ. պատմության տարբեր կողմերի վերաբերյալ տվյալները, որոնցով էլ պայմանավորված են աշխատության կառուցվածքն ու քննարկվող հարցերը: Լինելով այդպիսին՝ ուսումնասիրության մեջ արժարժվել են միայն այնպիսի խնդիրներ, որոնց մասին այս կամ այն չափով փաստական նյութ են ընձեռում անենահիմնական սկզբնաղբյուրները՝ արարվելգու հեղինակների երկերը:

Բացի պատմական զանազան խնդիրներից, աշխատության մեջ ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման կտավի վրա առաջին անգամ հետազոտության առարկա է դարձել քրդական երեք դինաստիաների՝ Հասանվայիների, Աննագիների և Մարվանյանների պատմությունը: Այդ ընթացքումը պատահական չէ. հաշվի է առնվել այն հանգամանքը, որ տվյալ դինաստիաների էթնիկական տարրը հիմնականում բաղկացած է եղել քրդական ցեղերից, որոնք էլ հանդիսացել են դրանց հիմնադրման և գոյատևման նախապայմանը: Բացի այդ, նկատի են առնվել աշխարհագրական այն տարածքները, որտեղ քրդերը շարունակում են ապրել մինչև մեր օրերը:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատությունում առաջին անգամ փորձ է կատարվել լրացնել այն բացը, որն առկա է քրդերի միջնադարյան պատմության հետազոտման քննազավառում: Ելնելով դրանից՝ հեղինակը նպատակ է ունեցել հնարավորին չափ մանրակրկիտ ուսումնասիրել միջնադարյան արարվելգու պատմիչների, ժամանակագիրների, աշխարհագիրների, կենսագիրների մեծածավալ գործերը քննարկելով, ինչպես նաև, կարելիության շրջանակներում, հայկական, բյուզանդական, առթական, պարսկական, այդ թվում նաև քրդական աղբյուրները, որոնք երբեմն շահեկան նյութ են պարունակում խնդրո

առարկա թեմայի այս կամ այն հարցի վերաբերյալ:

Խոնրավորելով և գիտական մշակման ու վերլուծության ենթարկելով IX-XV դդ. արարվելգու հեղինակների երկերում և օժանդակ այլ աղբյուրներում քրդերի X-XI դդ. պատմության տարբեր կողմերի լուսաբանմանը նպատառող ցրված տվյալները՝ աշխատության հեղինակի առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- ցույց տալ քրդերի դերն Արբասյան խալիֆայությունում՝ ռազմաքաղաքական իրադարձությունների լայն կտավի վրա;
- լուսաբանել քրդական ցեղերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքը, տեղաբաշխումը և տեղաշարժերի դրոշապատճառները;
- քննական վերլուծության ենթարկել ուսումնասիրվող ժամանակաշրջանում քրդերի արարական ծագման վարկածի առաջացման և մշակման քաղաքական դրոշապատճառները;
- վերլուծել քրդական երեք դինաստիաների՝ Հասանվայիների, Աննագյանների և Մարվանյանների ձևավորման պատմական նախադրյալները, գործունեությունը, նրանց փոխհարաբերությունները հարևան իշխանությունների հետ;
- լուսաբանել բուրդ-թյուրքական փոխհարաբերությունները՝ Մերձավոր Արևելքում Մեծ սեյուկների երևան գալուց հետո;
- դիտարկել իսլամի դերը քրդական ցեղային վերնախավի ռազմաքաղաքական կողմնորոշման մեջ և գործողություններում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը շարադրելու համար հիմնախարխախ են դարձել պատմական և աղբյուրագիտական վերլուծության սկզբունքները, որոնք մշակվել են հայ, ռուս և արևմտաեվրոպական արևելագիտության և պատմագրության կողմից:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա աշխատության պրակտիկ նշանակությունը պայմանավորված է հիմնականում նրա այժմեականությամբ, շրջանառության մեջ դրված նոր նյութերով և տվյալներով, մեկնարանություններով և հետևություններով, որոնք կարող են հիմք հանդիսանալ քրդական հասարակության, քաղաքական և էթնիկական պատմությանը նվիրված ընդհանուր և մենագրական աշխատություններ գրելու համար: Աշխատության նյութերը կարող են ծառայել որպես հասուկ կուրսի թեմաներ՝ հանրապետության բուհերի արևելագիտական թեքումով ֆակուլտետներում դասավանդելու համար և օգտագործվել արևելագետ-քրդագետների և հայագետների կողմից:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԸՆԴՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արարական երկրների, Իրանի, քրդագիտության բաժինների և արևելյան աղբյուրագիտական խմբի համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու հետևություններն արտացոլվել են 1974, 1976, 1978, 1981-1988 թթ. հանրապետական երիտասարդ արևելագետների, 1980-1981 թթ. ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի արարագետների ամենամյա նստաշրջաններում, ինչպես նաև, 1982 թվականի երիտասարդ արևելագետների և 1985թ. Երևանում կայացած արարագետների համամիութենական չորրորդ կոնֆերանսներում հեղինակի գիտական զեկուցումներում: Ատենախոսության մի շարք հատվածներ հայերեն, ռուսերեն, արաբերեն, քորքերեն, անգլերեն լեզուներով հրատարակվել են գիտական հանդեսներում, ժողովածուներում և հեղինակի կողմից երա-տարակված մենագրություններում: Ատենախոսության դրույթները վերծարվել են անցել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետում՝ Մերձավոր և Միջին Արևելքի միջնադարյան պատմության հատուկ կուրսերի դասավանդման ընթացքում:

ԱԳՐՅՈՒՐՆԵՐԸ

Միջնադարյան արարակետ աղբյուրներն առաջնակարգ տեղ են գրավում Արևելքի ժողովուրդների գրավոր հիշատակարանների շարքում և այժի են ընկնում ոչ միայն իրենց բանակով, հաղորդած նյութերի առատությամբ ու բազմազանությամբ, այլև՝ հիմնահարցերի, ժամանակագրական, ինչպես նաև՝ տարածքային ընդգրկումներով: Գրանք հանդիսանում են արարական խալիֆայության և առահասարակ հպատակ ժողովուրդների ու երկրների միջնադարյան պատմության, թերևս, ամենահիմնական սկզբնաղբյուրները: Ուստիև, առանց չափազանցության, կարելի է ասել, որ այսօր արարամահմեդական աշխարհի միջնադարյան ռազմաքաղաքական և մշակութային պատմությունը և դրան սերտորեն շաղկապված մյուս խնդիրների ուսումնասիրությունը համարյա անհնար է՝ առանց արարակետ տարաբնույթ սկզբնաղբյուրների ներգրավմանը:

Քրդերի հին և միջնադարյան պատմության մասին մեզ հասած քրդական միակ աղբյուրը Բաղեշի քուրդ իշխան, XVI դ. հեղինակ Շարաֆ խան Բիդլիսիի «Շարաֆ-նամե», երկն է, որը XIX դ. 60-ական թթ.-ից սկսած Վ.Ալեյամիմով-Չերնովի և Ֆ.Շ. Շարմուայի հրատարակությամբ լայնորեն սկսվեց օգտագործվել գիտական շրջանակներում: Գրքերեն գրված այդ աշխատությունը, որի

հրատարակությունն իրականացվել է մի քանի լեզուներով, այդ թվում և քրդերեն, գրվել է գլխավորաբար արարակետ նյութի հիման վրա: Այնուամենայնիվ, փաստ է, որ քուրդ պատմիչն իր երկում չափազանց քիչ տեղ է հատկացրել մեզ հետաքրքրող թեմային: Նրա տեսադաշտից դուրս են մնացել փաստական բազմաթիվ նյութեր՝ կապված քրդերի X-XI դդ. ռազմաքաղաքական պատմության և սոցիալ-տնտեսական կյանքի հետ:

Քրդերի X-XI դդ.պատմության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր են հաղորդում XI դ. հեղինակներ Իբն Միսբալայիզը, Աբու Շուջա՝ առ-Ռուզբավարին, Հիլալ սա-Սաբին և ուրիշներ:

Մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ և օգտակար նյութեր են պարունակում XII դ. հեղինակներ՝ Իբն ալ-Չաուգիի, Իբն ալ-Լույանիսիի և Իբն ալ-Ազրակի երկերը:

Ավելի առատ և բազմաբնույթ տվյալներ են հաղորդում հատկապես XIII դ. տիեզերական պատմության հեղինակներ Իբն ալ-Ասիրը, Իբն ալ-Վարդին, արարակետ ասորի պատմիչ Աբու-լ-Ֆարաջ Իբն ալ-Իբրին, հայտնի կենսագիր Իբն Խալիքքանը, XIII-XIV դդ. հայտնի պատմիչ Աբու-լ-Ֆիդան, XIV դ. հեղինակներ Իբն Քասիրը և Իբն Խալդունը: Մեր նյութի համապարփակ ուսումնասիրության համար որոշակի կարևորություն են ներկայացնում XIV-XV դդ. արաբ հեղինակների, մասնավորապես Իբն Թարդիբիդիի հաղորդումները:

Քրդերի X-XI դդ. ռազմաքաղաքական իրադարձությունների, քրդական ցեղերի տեղաբաշխման, տեղաշարժերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական որոշ խնդիրների ուսումնասիրության համար չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև արարակետ աշխարհագիրների բազմաբնույթ հաղորդումները: Այս տեսակետից հույժ կարևոր են IX-X դդ. հեղինակներ Իբն Խուրդադբեյհի, Իբն ալ-Ֆակիհի, Աբու Դուլաֆի, ալ-Բարսիլի, Իբն Համկալի, ալ-Մուկադդասի, ինչպես նաև ալ-Իդրիսի, Յակուբ ալ-Համավի և այլոց վկայությունները: Առավել հետաքրքրություն են ներկայացնում հատկապես X դ. ականավոր պատմիչ-աշխարհագիր ալ-Մասուդիի հաղորդումները քրդական ցեղերի, նրանց տեղաբաշխման և էթնիկական ծագման խնդիրների վերաբերյալ նյութերը:

Աշխատությունը շարադրելու համար ուսումնասիրության առարկա են դարձել ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր բազմաթիվ և տարաբնույթ սկզբնաղբյուրները: Հարկ է նշել, որ արարակետ թե՛ աշխարհագիրները, և թե՛ մատենագիրները հաճախ կրկնում են միմյանց և այս կամ այն դեպքի, վայրի, ցեղի մասին տալիս են երբեմն համառոտ և ընդարձակ, երբեմն էլ՝ իրարամերժ

տեղեկություններ: Այնուհանդերձ, հաղորդելով աշխարհագրական և պատմական բնույթի մանրամասներ, նրանք լրացնում են միմյանց և հնարավորություն են տալիս լուսարանելու X-XI դդ. քրդերի պատմության կարևոր մի շարք խնդիրներ: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ ներկա աղբյուրագիտական հենքն, այնուամենայնիվ, հնարավորություն չի բնօրոշում բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել քրդերի պատմության այդ խիստ կարևոր և ուշագրավ ժամանակաշրջանն ամբողջությամբ վերցրած: Անհրաժեշտ և համապատասխան նյութերի անառկայության պատճառով առանձին հարցեր չեն լուսարանվել: Տեղին է ընդգծել, որ շարադրանքի ընթացքում ընդհանուր առմամբ շարունակ զգացվել է նյութի պակաս, որի հետևանքով էլ պատմական որոշ փուլեր, քրդերի ներքին կյանքի կարևոր խնդիրներ գրեթե չեն լուսարանվել:

Սույն ատենախոսությունը շարադրելու համար ուսումնասիրվել են հայկական (Ասողիկ, Մ. Ուռուպեցի, Ա. Լաստիվեցի, Ս.Գանձակեցի), ասորական (Միքայել Ասորի, Անանուն Եղեսացի), բյուզանդական (Կոնստանտին Ծիրանածին, Հովհաննես Մկիլիցես, Իսահակ Կոմնենոս) և պարսկական (Նասիրի Խոսրով, Համդոլլահ Գազվինի) աղբյուրները:

Այսպիսով, միջնադարյան աղբյուրների համապարփակ ուսումնասիրությունը վկայում է, որ, այնուամենայնիվ, ինչպես նշվեց, քրդերի միջնադարյան, մասնավորապես X-XI դդ. պատմության լուսարանման համար հիմնական աղբյուրները շարունակում են մնալ արարալեզու հեղինակների բազմահատորանոց երկերը:

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջարանից, հինգ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ու սկզբնաղբյուրների ցանկից:

Առաջարանում հիմնավորվում է ուսումնասիրվող բնօրոշակի արդիականությունը, գիտական նշանակությունը, որոշվում են նրա նպատակը, հիմնական խնդիրները, նորույթը և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում („Աղբյուրների և գիտական գրականության տեսություն,“) արվում է սկզբնաղբյուրների նյութերի վերլուծությունը: Համառոտակի ներկայացվում են մասնավորապես միջնադարյան արարալեզու պատմաաշխարհագրական գրականության ձևավորման և զարգացման փուլերը: Առավել կարևորվում են IX-XV դդ. արարալեզու մատենագիրների, աշխարհագիրների, կենսագիրների և այլոց առարաբնույթ հաղորդումները խնդրո առարկա ժամանակաշրջանի

պատմության տարբեր կողմեր լուսարանելու համար: Տպագիր և ձեռագիր մեծ քանակությամբ աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է, որ միջնադարյան հեղինակների հիմնական ուշադրությունը սևեղված է X-XI դդ. քրդերի ռազմաքաղաքական գոծողությունների, մասնավորապես քրդական դինաստիաների և հարևանների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների, ինչպես նաև ցեղային ավազանու, իսլամի դրոշի ներքո մղած պայքարի և պատմական այլ խնդիրների վրա: Այդ իմաստով կարևոր և փաստական հագվագյուտ տեղեկություններ են պարունակում տիեզերական պատմությանը նվիրված արարալեզու մատենագիրների աշխատությունները: Քրդական ցեղերի տեղաշարժերի, զբաղմունքի և այլ հարցերի վերաբերյալ եզակի նշանակություն ունեն աշխարհագիրների նյութերը, որոնք առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել սույն ատենախոսությունում: Հատուկ քննարկման առարկա է դարձել բնօրոշակի ուսումնասիրության վիճակը:

Հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ քրդերի և Քուրդիստանի նկատմամբ ընդհանուր հետաքրքրությունն արևմուտքում, դիվանագիտական և արևելագիտական շրջանակների կողմից սկսվեց հիմնականում XIX դ. երկրորդ կեսից: Սակայն Արևմուտքի տարբեր տերությունների քաղաքական-հասարակական գործիչներ, ելնելով որոշակի նկատառումներից և կատարելով որոշ գերատեսչությունների պատվերներ, մեծ ու փոքր գործեր գրեցին քրդերի և Քուրդիստանի մասին, որոնք առատ նյութ են մատակարարում քրդերի նոր և նորագույն պատմության, ազգագրության և այլ հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներին: Հակառակ այդ իրողության, քրդերի միջնադարյան պատմության տարբեր ժամանակաշրջաններ ընդհանրապես դուրս մնացին հետազոտողների ուշադրության կենտրոնից: Դա բացատրվում է նախ անհրաժեշտ բազմալեզու աղբյուրագիտական հենքի բացակայությամբ, երկրորդ՝ առկա սկզբնաղբյուրների ոչ կատարյալ ուսումնասիրությամբ:

Այդուհանդերձ, քրդական դինաստիաների պատմության ուսումնասիրության առաջին փորձը պատկանում է եվրոպացի արևելագետ Ստենլի Լենպուլին: Նրա „Սահմեդական դինաստիաներ,“ տեղեկատու գրքում տեղ գտավ նաև քրդական ամիրայական մի քանի գերդաստանների համառոտ ներկայացումը:

Ստենլի Լենպուլի հիշյալ աշխատությունը հետագա հետազոտողների համար ծառայեց որպես ուղեցույց և հիմնախնդիրներ մշակելու յուրօրինակ պլան-պրոպոզիցիա:

X-XI դդ. քրդերի և քրդական դինաստիաների մասին առանձին հանրագիտարաններում գետեղվել են որոշ բառահոդվածներ, որոնք

գրվելով գլխավորապես արարալեզու հեղինակների նյութերով, ունեն հիմնականում անդեկատվական բնույթ:

Ինդրո առարկա թեման ընդհանուր գծերով արծարծվել է Վ. Մինոբսկու „Քրդեր, Քուրդիստան, „Իսլամական հանրագիտարանի,, համար գրված հոդվածում: Բնական է, 25 էջանոց հոդվածում հեղինակն ի վիճակի չէր լինելու լուսարանի X-XI դդ. պատմական բոլոր անցքերը, քանի որ հանրագիտարանի ընթերցողներին նա ամփոփ ներկայացրել է Քուրդիստանը, քրդերի էթնիկական ծագումը, պատմությունը, մշակույթը՝ հին շրջանից մինչև XX դար:

Վ. Մինոբսկու սույն հոդվածը, որն, այնուամենայնիվ, գիտական մեծ արժեք ունի, ուղեցույց է հանդիսացել թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հետազոտողների համար:

XX դ. բուրդ պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ Անին Չաքին բուրդ ժողովրդի պատմությանը նվիրված իր հիմնականում „Քրդերի և Քուրդիստանի համառոտ պատմություն,, և „Քրդական պետություններն ու իշխանությունները մահմեդական ժամանակաշրջանում,, հավակնոտ խորագրերով աշխատություններում իրականում առանց գիտական վերլուծությունների և երբեմն առանց փաստական տվյալների սուկ ընդհանուր գծերով է անդրադարձել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին: Վերաշարադրելով հիմնականում Շ.Խ.Բիդլիսիի քրդական դինաստիաների մասին հաղորդումները՝ բուրդ պատմաբանի տեսադաշտից դուրս են մնացել բազմաթիվ աղբյուրներ, իսկ իր օգտագործած նյութի նկատմամբ չի դրսևորել քննական մոտեցում, որի հետևանքով նրա տեսակետները հիմնականում վիճելի են:

Ինչպես Մ.Չաքին, այնպես էլ բուրդ և արևելյան այլ մտավորականներ իրենց աշխատություններում խնդրո առարկա թեմային թուցիկ են անդրադարձել, շատ հաճախ թույլ տալով սխալ եզրահանգումներ:

X-XI դդ. քրդերի պատմության հիմնախնդիրներին թեկուզ համառոտ, չեն անդրադարձել նաև քրդագետներ Ա. Մաֆրասայանը, Ա. Մենթաշաշվիլին և այլք: Անհրաժեշտ է ավելացնել, որ ասոնավստության մեջ արծարծվող հիմնախնդիրները գրեթե անտեսվել են ռուս, արևելյան և եվրոպացի հետազոտողների՝ արաբական խալիֆայությանը, քրդերին և Քուրդիստանին նվիրված ուսումնասիրություններում: Դրանց հեղինակները, որպես կանոն կամ լրել են միջնադարյան այս ժամանակահատվածի մասին, կամ էլ լավագույն դեպքում մի քանի նախադասությամբ այս կամ այն խնդրի առնչությամբ անդրադարձել են քրդերի գործունեությանը: Կարճ ասած, ուսումնասիրվող ժամանակաշրջանն անհրաժեշտ չափով չի լուսարանվել, թե՛ քրդագետների, և թե՛ արաբագետների ու

իրանագետների կողմից: Հետևաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այսօրվա դրությամբ կատարված աշխատանքները շատ հեռու են բավարար համարվելուց: Ժամանակաշրջանն իր մի շարք կողմերով շարունակում է մնալ որպես բուրդ ժողովրդի միջնադարյան պատմության չուսումնասիրված փուլերից մեկը: Իսկ առկա գործերում չեն շռչավիվել առանցքային այնպիսի հիմնախնդիրներ, որոնք գիտական խիստ կարևորություն ունենալով, քիչ թե շատ կարող են ամբողջացնել քրդերի արաբամահմեդական ժամանակաշրջանի պատմությունը:

Ներկա ստեղծագործությունն ասես, որպես այդպիսին, իր բովանդակությամբ, հարցադրումներով, ինչպես նշվեց, առաջին փորձն է թե՛ մեր և թե՛ արտասահմանյան արևելագիտության մեջ: Միաժամանակ, այն բնավ հավակնություն չունի համարվելու քրդերի X-XI դդ. պատմության բոլոր անցքերը լուսարանող գործ: Նրա այս կամ այն բացը լրացնելու և ճշտելու գործում մեծապես օգտակար կարող են լինել քրդերի հարևան ժողովուրդների նոր գրավոր սկզբնաղբյուրների տվյալների հանգամանորեն և մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Ատենախոսության սույն գլխում հեղինակը միաժամանակ անդրադարձել է „Քուրդիստան,, հասկացությանը: Քննադատության ենթարկելով բուրդ մտավորականության՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի համար „Քուրդիստան,, տերմինի գործածումը և նրանց կողմից դրա դիտարկումը որպես քաղաքական հասկացություն, նա գտնում է, որ չնայած այդ տերմինը շրջանառության մեջ է դրվել հիմնականում XII դարից, այնուամենայնիվ, այն ունեցել է զուտ ազգագրական նշանակություն, երբեք չդիտվելով որպես քաղաքական-պետական միավոր:

Աշխատության **երկրորդ գլխում** („Քրդական ցեղերի տեղաբաշխումը արաբական խալիֆայությունում,,) ատենախոսության հեղինակը նշում է, որ արաբական ողջ տիրապետության ժամանակաշրջանում՝ սկսած VII դարի 30-40-ական թթ.-ից քրդերը հիշատակվում են հիմնականում ժամանակակից իրանական և իրաքյան Քուրդիստանների տարածքներում, մասնավորապես Հուլվանում, Քերմանշահում (Կարմասինում), Շահրեզուրում, Մոսուլի մարզում, ինչպես նաև հարակից իրանական որոշ նահանգներում՝ Ատրպատականում, Ֆարսում, Խուզեստանում: Մակայն եղած նյութերը հնարավորություն չեն տալիս ցույց տալ քրդական ցեղերի բնակավայրերի ճշգրիտ սահմանները: Չանագան դրդապատճառներով նրանք մշտապես գտնվել են շարժման մեջ, և երբեմն անհնար է դառնում պարզել այս կամ այն ցեղի տեղաշարժվելու սառյց դրդապատճառն ու ժամանակը:

Այդուհանդերձ, հայտնի է, որ, օրինակ, Մոսուլի մարզը և նրան հարակից շրջանները, որոնց «քրդական ամրությունների», մասին սկզբնաղբյուրները ակնարկում են դեռևս VII դարից, ինչպես նաև Ջազիրայի և Ջիրաի առանձին վայրեր բնակեցված էին քրդերով:

Այս գլխում ուսումնասիրության առարկա են դարձել քրդական ցեղերի բնակավայրերը, տեղաշարժերը, գրադոմուքն ու լեզուն: Մեզ հասած սկզբնաղբյուրները վկայում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում քրդական իրականության մեջ գերակայում էին տոհմացեղային հարաբերությունները: Այդ ցեղերը հայտնի էին արաբական ցեղային անվանումներով՝ «կարիլա», «աշիրա», «տաիֆա», և այլն, որոնք ոչ միշտ էին համընկնում քրդական իրականության հետ և շատ հաճախ պայմանական բնույթ էին կրում:

Համաձայն սկզբնաղբյուրների, քրդերն ունեին տոհմացեղային հիերարխիա: Առկա էին քրդական ավագանու շերտավորման մի քանի անվանումներ՝ «մուկիմ», կամ «մուկադիմ», (հոգ. քիվ՝ «մուկիմուն», կամ «մուկադիմուն») և «ռայիս», (հոգ. քիվ՝ «ռուսաս»),: Ըստ եղած տվյալների, կարելի է ենթադրել, որ «մուկիմ», տերմինն (առաջնորդ, ղեկավար) ամենայն հավանականությամբ եղել է ռազմական տիադրս (կոչում): «Ռայիս», էր կոչվում ցեղի ավատատեր-ղեկավարը, որը սովորաբար ուներ «կարա», (բերդ) կամ «հիսն», (լեռնային ամրոց) և պաշտպանական նպատակներով ռազմական ջոկատ:

Բացի այդ, X դարից քրդական իրականության մեջ հայտնվում է նաև ամիրաների ռազմաքաղաքական ինստիտուտը, որի երևան գալը սերտորեն կապված էր խալիֆայությունում մղվող ավատատիրական-անջատողական գործընթացի հետ:

Մույն գլխում հեղինակը ներկայացնում է խալիֆայության աարքեր նահանգներում քրդական ցեղերի ցանկը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Մոսուլի, Ջազիրայի, Ջիրաի և իրանական որոշ նահանգներում ապրող քրդական ցեղերի ուսումնասիրությանը: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ այս տարածքների քրդական բնակավայրերը անասնապահական-ավատատիրական տիրույթներ էին: Այնուամենայնիվ, չնայած քրդերի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին աղբյուրները սակավ տեղեկություններ են պարունակում, քայցևայնպես, կարելի է հաստատել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդերի հիմնական տնտեսավարման տեսակը անասնապահությունն էր: Քրդերի նստակյացության և այլ տնտեսավարման ձևերի մասին աղբյուրներում հանդիպում են միայն բռուցիկ տեղեկություններ: Արաբ հեղինակները քրդական ցեղերի անասնապահական «*ձմեռանոցներն*», ու «*ամառանոցներն*», անվանում են «*մաշառի վա մասաիֆ ալ-սքրադ*»:

Ըստ միջնադարյան աղբյուրների հաղորդած նյութերի, քրդերը

խառն էին քրդերենի բազմաթիվ խոսվածքներով: Լինելով խալիֆայության կազմում և չունենալով պետականություն մահմեդականություն ընդունած քրդերը որպես գրական լեզու գործածում էին արաբերենը, որը մեծ ազդեցություն գործեց քրդերենի վրա՝ դասելով նրա արդի վիճակից:

Արաբական նվաճումներից հետո, քրդերը կամա թե ակամա սերտ հարաբերություններ էին հաստատում արաբների և խալիֆայության այլ ժողովուրդների հետ: Մակայն գանազան ռազմաքաղաքական և տնտեսական նախապայմանների թելադրանքով, հարևան արաբական ցեղային միությունների հետ նրանք մշտապես գտնվում էին հակամարտության մեջ:

X-XI դդ. քրդերի ռազմաքաղաքական ակտիվացումը պայմանավորված էր խալիֆայության քաղաքական իշխանության խարխիվմամբ և իրանական ժողովուրդների կողմից ձեռնարկված հակաարաբական ելույթների մեծ քափով: Այնուամենայնիվ, նրանց ընդվզումները տարերային բնույթ էին կրում և հիմնականում ունեին տեղական նշանակություն:

VIII դարից սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական գանազան դրդապատճառների հետևանքով սկսվեցին քրդական ցեղերի տեղաշարժերը խալիֆայության տարածքում: X-XI դդ. այս երևույթն արդեն գանգվածային բնույթ էր կրում: Այս շրջանում սկիզբ առավ քրդական ցեղերի արտագաղթը Մոսուլի և Ատրպատականի մարզերից դեպի Հայաստանի հարավ-արևմտյան գավառներ, որը բյուրքական տիրապետության ժամանակաշրջանում գնալով ուժգնացավ:

Քրդական ցեղերի արտագաղթերի և մահմեդականացման գործում ակտիվ դեր խաղաց քրդական ցեղային վերնախավը: Զգտելով ընդլայնել իր ազդեցության ոլորտը և ելնելով քաղաքական, ինչպես նաև տնտեսական նպատակներից՝ քրդական վերնախավն իր հետևից տարավ ցեղակիցներին: Դրա հետևանքով էլ, հասկանալի էր ուսումնասիրվող ժամանակաշրջանում, մահմեդականացման գործընթացը քրդական իրականության մեջ կրեց գանգվածային բնույթ:

Ատենախոսության նույն գլխում քննարկման առարկա է դարձել «քրդական ցեղերի արաբական ծագման վարկածը խալիֆայությունում և նրա առաջացման դրդապատճառները»:
Այս կարակցությամբ հեղինակը գտնում է, որ VIII դ. սկզբնավորվող արաբական պատմաաշխարհագրական գրավոր բազմաթիվ աղբյուրներում փորձեր են կատարվել հպատակ մի շարք ժողովուրդների էթնիկական ծագումն ու ձևավորումը մեկնաբանելու ուղղությամբ: Դա բխում էր արաբական խալիֆայության ընդհանուր քաղաքականությունից և կապված էր նրա ճգնաժամային այս կամ

այն փուլի հետ: Հատկապես ռազմատենչ և անհնազանդ ժողովուրդների էթնիկական ծագման հարցերի՝ արաբ միջնադարյան գործիչների կողմից շահադեմ պարզաբանումները հեռանկարային նախադրյալներ կարող էին ստեղծել ոչ միայն արաբական տիրապետության ամրապնդման, այլև՝ նոր կրոնի տարածման համար: Այդ նպատակով էլ մահմեդական միջնադարի գրեթե բոլոր հեղինակներն այս հարցում ևս մեծապես դիմել են Աստվածաշնչի և դիցաբանական ավանդությունների նյութերին, առաջ քաշելով ավյալ ժողովուրդների ինչպես արաբական, այնպես էլ սեմական ծագումը:

Քրդերի արաբական ծագման վարկածը, որքան հայտնի է, արաբական գրավոր աղբյուրներում արձանագրվել է VIII դարից, որին անդրադարձել են արաբալեզու հայտնի գրեթե բոլոր ծագումնաբանները, մատենագիրները, աշխարհագիրները և այլք: Անհատելու է մշել, որ քրդերի էթնոգենեզի հիմնախնդիրը ուսումնասիրելու բնագավառում արաբ հեղինակները վաղ միջնադարից սկսած տրամաբանորեն ճիշտ են սկսել իրենց մեկնությունը: Նրանց ամենից առաջ հետաքրքրել է „բուրդ“, էթնոմիմը, որի բացատրության ճանապարհին կրոնական ավանդույթները նրանց մղել են իդեալիստական հիմնավորման: „Բուրդ“, տերմինը դիտելով որպես առանձին էթնիկական խմբի ինքնանվանում՝ արաբալեզու հեղինակները նրա մեջ մարմնավորել են այդ անունը կրող առասպելական մի մարդու՝ Բուրդ, որի անունով էլ սերունդը կոչվեց „բուրդ“, „բրդեր“, (հոգ. քիվ աքրադ):

Քրդերի արաբական ծագումն իր մի քանի տարբերակներով ամփոփ և վերջնական ձևակերպում ստացավ X դարի աշխարհագիր-մատենագիր ալ-Մասուդիի երկերում: Այն իր բազմազան տարբերակներով զնալով տարածվեց նաև հայտնի բուրդ Այյուբյան գերդաստանի վրա (1169թ. մինչև XV դ. վերջը):

Եթե վաղ, նուրիսկ ուշ շրջանի արաբալեզու հեղինակներից շատերը հաճախ կառչել են „Բուրդ“, առասպելական անձնանունից, ապա ալ-Մասուդին դրան կարևորություն համարյա չի տալիս: Կանգ առնելով մի քանի տարբերակների վրա՝ նա փորձել է քրդերի ծագումը սերել Մոսուլի մարզում և Միջագետքում հաստատված հայտնի արաբական ցեղային միավորումներից (Ռարիաա՛, Մուդդար, Բարբ):

Արաբալեզու հեղինակների երկերում, փաստաբեմ, քրդերը համարվում են եկվոր, և նրանց Արաբիայից դուրս գալը կապվում է արաբական ցեղերի նախախլամական արտագաղթերի հետ:

Այդուամենայնիվ, ի՞նչն էր արաբներին մղում առաջ քաշելու և մշակելու քրդերի արաբական ծագման վարկածը: Ատենախոսության հեղինակի կարծիքով դա կապված էր արաբական խալիֆայությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական բարդ

գործընթացների հետ: Նույնացնելով քրդերի և արաբների ծագումը, արաբները ջանում էին ինչ-որ չափով սիրաշահել քրդական ցեղերին, և պատահական չէ, որ նրանց արաբական ծագումը որոշակի ժամանակահատվածում բխեցվում էր Ռարիաա՛, Մուդդար և Բարբ ցեղերից, որոնց անունով էլ կոչվում էին Ջազիրայի (Վերին Միջագետք) տարածքները՝ Դիյար Ռարիաա՛, Դիյար Մուդդար, Դիյար Բարբ: Արաբական նվաճումներից հետո, դեպի այս վայրեր սկսեցին արաբական ցեղերի նոր արտագաղթերը: Այս շրջանները, որպես վարչական միավորներ, մտնելով Ջազիրայի կազմի մեջ, ընդգրկում էին հսկայական թվով բնակավայրեր, ուր իրենց ընդլվզումներով աչքի էին ընկնում քրդերը:

Մոսուլի մարզում արաբական Ռարիաա՛ և Մուդդար ցեղային միությունների հետ միասին քրդական ցեղերն ունեին անասնապահական ձմեռանոցներ և ամառանոցներ:

Արաբական Ռարիաա՛, Մուդդար և Բարբ ցեղային միություններից Քրդերի սերման վարկածը կհեշտացներ քրդաբնակ վայրերի լիակատար յուրացումը արաբների կողմից՝ մեծացնելով իսլամը տարածողների տնտեսական և ռազմաքաղաքական կշիռը:

Անշուշտ, քրդերն, իբրև իրանական ժողովուրդ, էթնիկական որևէ առնչություն չունեն սեմական ժողովուրդների, մասնավորապես արաբների հետ, թեպետև անժխտելի են երկու կողմերի էթնիկական փոխազդեցությունները խալիֆայության տիրապետության շրջանում: Քրդերի արաբական ծագման վարկածը մշակելով, որի հայրենիքը հիմնականում հանդիսացավ ժամանակակից իրաքյան Բուրդիստանի տարածքը, արաբները ցանկանում էին ոչ միայն մեղմել քրդերի հակաարաբական տրամադրությունները և արաբական ցեղերի հետ ունեցած հակասությունները, այլև նրանց ներգրավել խալիֆայության ռազմաքաղաքական գործողությունների մեջ:

Ատենախոսության երրորդ գլխում („Քրդերը Ջիրայում՝ X դարի

1 „Ջիրալ“, արաբերեն „ջարալ“, (լեռ) գոյականի հոգնակի թիվն է: Վարչատարածքային բաժանում արաբական խալիֆայությունում: Հա-մադան կենտրոնով Իրաքի և Իրանի միջև ընկած լեռնային գտնիներն ու շրջանները: XII դարից արաբական Իրաքից գանազանվելու համար Ջիրալը կոչվեց աջանական Իրաք (Իրակ ալ-Աջամ) (տես՝ Յակուբ, II, էջ 99): Ջիրալի կազմում էին ընդգրկված Ռեյը, Իսֆահանը, Համա-դանը, Դիմավաքը, Քերմանշահը և այլ վայրեր: Արաբ աշխարհագիրները Ջիրալի մաս են համարել Համադանից հյուսիս՝ Արապատականի միջև ընկած տարածքը: Նահանգն այժմ կոչվում է Արդեբան՝ Միննա կենտրոնով: Տես՝ В.В.Бартольд, Сочинение, т. 7, М., 1977, с. 198.

երկարող կես- XI դարի առաջին կես) քննարկման առարկա են դարձել քրդերի ռազմաքաղաքական գործողությունները, Ջիբալի մարզում և հարակից շրջաններում իրանական դայվանիների երևան գալը և քրդերի հետ ունեցած փոխհարաբերությունները:

Ատենախառության հեղինակը նշում է, որ IX դարում և մասնավորապես X դարից, նկատվեց քրդական տարրի շեշտակի ակախվացումը հատկապես Արևմտյան Իրանում, որտեղ X դ. 20-30-ական թթ. ակտիվ գործողություններ ծավալեցին իրանական դայվանիները:

Հակաաբբասյան հզոր շարժումների հետևանքով IX դ. ընթացքում խալիֆայության գերիշխանությունն աստիճանաբար ընկավ Իրանի մեծ մասում: Նրա տիրապետության տակ մնացին միայն Ջիբալը և հարակից շրջանները (Արևմտյան Իրան):

Քրդական ցեղերը և դայվանիական ջոկատները X-XI դարերից սկսած իրենց ռազմական գործողություններով նոր լիցք հաղորդեցին արևելյան խալիֆայության մահմեդական աշխարհի իրանական տարրի ակախվացմանն ընդհանրապես: Դրա հետևանքով Ջիբալում քաղաքական ասպարեզում ի հայտ եկավ դայվանիական ծագում ունեցող Բուիների (Բուվայիների) դինաստիան, որը կարճ ժամանակահատվածում կարողացավ իրադրության տեր դառնալ հիշյալ մարզում:

945 թ. ղեկավարեցին Բուի Ահմադը հարձակվեց Բաղդադի վրա և գրավեց արաբական Իրաքը: Ալ-Մուսաբաֆի խալիֆան (944-946թթ.), հակառակ իր կամքի, ընդունեց Բուի գորավարին և նրան շնորհեց „Ամիր ալ-Ռամարա,, (իշխանաց իշխան) և „Մուիզզ ադ-Դաուլա,, տիտղոսները: Խալիֆան նման բարձր տիտղոսներ շնորհեց նաև Բուի մյուս երկու եղբայրներին՝ Ալիին՝ Իմադ ադ-Դաուլա, իսկ Հասանին՝ Ռուբն ադ-Դաուլա: Դրանով շուրջ երկու դար Աբբասյան խալիֆայությունը զրկվեց քաղաքական իշխանությունից: Իրանական այս տարրի տիրապետության տակ անցավ ողջ Արևմտյան և Հարավային Իրանը՝ պարսկական Իրաքի մեծ մասը, Խուզիստանը, Ֆարսը, Քերմանը, արաբական Իրաքը՝ Բաղդադ և Բասրա քաղաքներով: Նրանց պետության հիմնական կենտրոններ դարձան Բաղդադը և, իհարկե, նրանց մայրաքաղաք Շիրազը:

X դարի առաջին կեսից քրդական ցեղերի հիմնական մասը Ջիբալում և հարակից շրջաններում ընկավ ղեկման Բուիների գերիշխանության տակ:

IX-X դդ. Աբբասյան խալիֆայությունում իրանական տարրի չափազանց ակտիվացումը և ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակը նոր թափ հաղորդեցին քրդական ցեղերի գործողություններին: Օգտվելով խալիֆայությունում և տարածաշրջանում

ստեղծված նպաստավոր պայմաններից՝ քրդական ավատատիրական վերնախավը, ցեղակիցներին համախմբելով, դուրս եկավ քաղաքական ասպարեզ՝ փորձելով առանձին շրջաններում ընդլայնել իր ազդեցության ոլորտը:

Հեղինակը հանգամանորեն քննարկման նյութ է դարձրել Ջիբալում քրդական Հասանվայիների դինաստիան, որը հիշյալ տարածքում գոյատևեց ավելի քան կես դար, սերտ հարաբերություններ ունենալով Բուիների հետ:

Հեղինակը նշում է, որ Հասանվայիների դինաստիայի հիմնադրման որոշակի տարեթիվը հայտնի չէ: Աղբյուրները Հասանվայի իրն Հուսեյն ալ-Բուրդիին առաջին անգամ հիշատակում են հիջրի 359 (969/70)թ. դեպքերը նկարագրելիս: Շարաֆ խան Բիդլիսին գրում է, որ իշխանության հիմնադիր Հասանվային եղել է Բուի Հասանի ժամանակակիցը, որը 935 թ. գրավեց Ջիբալը:

Հասանվայիի բեռորդիներ Վինդադի (հիջ. 349 (960/1)թ.) և Գանիմի (հիջ. 350(961/2)թ.) մահից հետո քրդական ալ-Այշանիյա ցեղի զբաղեցրած տարածքի վրա երևան եկավ Հասանվայիների դինաստիան: Հեղինակն այն եզրակացության է հանգում, որ Դինավար կենտրոնով քրդական այս դինաստիայի հիմնադրումը կարելի է համարել 961/2 թ.: Այն գոյատևեց մինչև 1015 թվականը և նրա իշխանությունը տարածվեց Ջիբալի հիմնական քաղաքների՝ Համադանի, Դինավարի, Նիհավանդի և հարակից այլ շրջանների վրա:

Ատենախառությունում տարաբնույթ սկզբնաղբյուրների հիման վրա լուսարանվում են Հասանվայիների, մասնավորապես Բադր ամիրայի և Բուիների փոխհարաբերությունները, Հասանվայիների ներքին հակասությունները, սոցիալ-տնտեսական կյանքը և այլն:

Ատենախառության հեղինակը սկզբնաղբյուրների նյութի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա հանգել է այն եզրակացության, որ չնայած ժամանակակից իրանական Բուրդիստանը և հարակից շրջանները, ուր գործեցին Հասանվայիները ձևականորեն համարվեցին Բուական տարածքներ, սակայն տեղական լիիրավ իշխանությունը պատկանում էր քրդերին: Բուիները բավարարվում էին միայն Հասանվայիների ռազմատնտեսական աջակցությամբ: Թեպետև քրդական այս դինաստիան գոյատևեց ավելի քան կես դար, այնուամենայնիվ, նոր լիցք հաղորդեց քրդական ցեղերի ռազմաքաղաքական գործողություններին:

Բադրի սպանությունից (1015 թ.) հետո Հասանվայիների տարածքներն անցան Բուիներին, բացառությամբ որոշ շրջանների (Հուլվան, Շահրեզուր), ուր ամրապնդվեցին քուրդ Աննալայանները:

Ատենախոսության հեղինակը նշում է, որ մինչև սելջուկ-քյուրքերի երևան գալը Ջիրսուի տարածաշրջանը վերածվել էր միջավատատիրական կոիվների և հակաառաջնորդների թատերարձի:

Այստեղ, ինչպես և այլ վայրերում, քրդական միասնական իշխանություն չհիմնվեց: Ընդհակառակը, ներքին հակաառաջնորդները օտար ուժերին թույլ տվեցին միջամտելու քրդական ցեղերի ներքին կյանքին:

Ատենախոսության նույն գլխում ուսումնասիրության առարկա է դարձել Հուլվանում և Շահրեզուրում հաստատված քրդական Աննազյան դինաստիան, որի քաղաքական ասպարեզ դուրս գալը հակաարաբական և տեղական իշխանության համար մղված անհաշտ պայքարի արգասիք էր: Աննազյան ավատատիրական վերնախավին հաջողվեց շուրջ 130 տարի քիչ թե շատ քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերել հիշյալ տարածաշրջանում:

Աննազյան քրդերի ռազմաքաղաքական գործունեությունն դարձյալ սերտորեն կապված էր իրանական Բուիների և XI դ. 30-ական թվականներից այս տարածք ներխուժած սելջուկ-քյուրքերի գործողությունների հետ: Չնայած Բուիների գերիշխանության թուլացմանը, Աննազյաններն ակամայից կախման մեջ գտնվեցին սկզբում նրանցից, ապա՝ սելջուկ-քյուրքերից:

Հուլվան կենտրոնով Աննազյանների իշխանությունը հիմնադրեց քրդական կիսաքոչվոր աշ-Շադինջան (կամ աշ-Շադանջան) խոշոր ցեղային միավորման առաջնորդ Աբու-լ-Ֆաթի Մուհամմադ իբն Աննազը: Ըստ պատմիչների, նա Հուլվանում իշխեց ուղիղ 20 տարի և մեռավ հիջ. 401թ. (1010/11թ.): Այսինքն, դա նշանակում է, որ նա իշխանության գլուխ անցավ հիջ. 381թ. (991թ.), որն սկզբից ևեք թշնամական հարաբերություններ ունեցավ քուրդ Հասանվայիների հետ:

Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Աննազյան իշխանության, Բուիների ու քուրդ Հասանվայիների փոխհարաբերություններին, ներքին երկպառակություններին և այլն:

Չորրորդ գլխում („Զրդերը Մոսուլի մարզում և Վերին Միջագետքում X դարի երկրորդ կես- XI դարի առաջին կես,“) հեղինակն անդրադառնում է Մոսուլի մարզում և Վերին Միջագետքում քրդերի ռազմաքաղաքական գործողություններին՝ հատուկ խնդրա առարկա դարձնելով Մարվանյան դինաստիան (980-ական-1085 թթ.):

Մայյաֆարիկին (պատմական Նփրկերտ) կենտրոնով Մարվանյան կամ Մերվանյան իշխանությունը հիմնադրվեց X դ. Դիյար Բաքրում՝ Մեծ Հայքի հարավ-արևմտյան որոշ գավառներում: Հեղինակը սաբյուրագիտական վերլուծության հիման վրա ցույց է տալիս այս վայրերում քրդական տարրի ներթափանցումը: Նա նշում

է, որ դինաստիայի հիմնադրի՝ Բադի (? -990) գլխավորությամբ Դիյար Բաքրում քրդերի ռազմաքաղաքական գործունեությունը աղքատներում հիշատակվում է X դարի 80-ական թթ.-ից: Բադի և նրա նվաճողական գործողությունների սկզբնավորման վերաբերյալ պատմիչները հայտնում են երկու տեսակետներ: Ըստ առաջինի, քուրդ առաջնորդի գործողություններն սկիզբ առան Խիզանի լեռներում, որտեղից նա ասպատակեց Դիյար Բաքրը: Ըստ երկրորդ տեսակետի, Բադը քրդական ալ-Համիդիյա ցեղից էր, և նրա ռազմական գործողություններն սկսվեցին Դիյար Բաքրի սահմանային գոտիներում:

Մինչև 978թ. մասնագիրները լուծ են Բադի մասին, որին սկսում են հիշատակել հիջ. 373թ. (983/4թ.), այն ժամանակ, երբ նա ռազմական որոշակի հաջողությունների էր հասել: 984թ. սկստները ամսին Բադը գրավեց Մայյաֆարիկինը, ապա Ամիդը, Հիսն Զեյֆան, Մծբինը, Խլաքը, Մանազկերաը: Ասպատակելով բյուզանդացիների ձեռքում գտնվող Տարունը՝ սքի քաշեց ամբողջ գավառը և ավարի առավ Մուշ քաղաքը՝ սրախողխող անելով Մր. Փրկիչ եկեղեցու քահանաներին:

Ատենախոսությունում հանգամանորեն լուսարանվում են Բադի և Բուիների ու արաբ Համդանյանների փոխհարաբերությունները: Պետք է նշել, որ Բադի վարած ռազմաքաղաքական գործողությունների հետևանքով քրդերին հաջողվեց ամրապնդել հիշյալ վայրերում և հետագա ժամանակաշրջաններում տարածվել նաև Մեծ Հայքի կենտրոնական շրջաններում: Նրա սպանությունից հետո, 990 թ. իշխանության գլուխ է անցնում նրա քեռորդին՝ Աբու Ալի Հասան իբն Մարվանը (990-997թթ.): Դրանով իշխանությունը անցնում է Մարվանյան գեղատանին:

Հեղինակը հարուստ նյութի հիման վրա լուսարանում է Մարվանյան ամիրաների գործունեությունը, իշխանության ներքին կյանքը: Ատենախոսությունում առանձին ուսումնասիրության առարկա է դարձել Մարվանյանների և Բյուզանդական կայսրության փոխհարաբերությունները:

Հեղինակը նշում է, որ Բադից հետո Մարվանյանների և Բյուզանդիայի միջև փոխհարաբերությունները հիմնականում կրում էին բարեկամական բնույթ: Իր գերիշխանությունը պահպանելու նպատակով՝ կայսրությունը դիվանագիտական խաղեր էր վարում Մարվանյանների հետ՝ փորձելով դրանով իսկ պաշտպանել սահմանամերձ շրջանները մահմեդական ամիրայությունների հարձակումներից: Բյուզանդական կայսրության նման քաղաքականությունը թույլ տվեց Մարվանյաններին ավելի քան մեկ դար գոյատևել Դիյար Բաքրում:

Ատենախոսության **հինգերորդ գլխում** („Քրդերը Մեծ Սելջուկների ժամանակաշրջանում,“) հեղինակն անդրադառնում է քյուրքերի տարածմանը Մերձավոր Արևելքում, նրանց արշավանքներին՝ նշելով, որ պատմության բառերաբեմում սելջուկ-քյուրքերի երևան գալը պատմական բախտաբաշխ փուլ հանդիսացավ տարածաշրջանի երկրների և ժողովուրդների կյանքում: X-XI դդ. սելջուկ-քյուրքական ցեղերին աստիճանաբար հաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել Միջին Ասիայից մինչև Իրան, Փոքր Ասիա, Անդրկովկաս:

Հեղինակը նշում է, որ սելջուկյան արշավանքները նախորդած օղուզական քափառող ցեղերի ինտենսիվ տեղաշարժերը դեպի Իրան, Ատրպատական և այլ վայրեր, սկսվեցին դեռևս հիշ. 420թ. (1029թ.): Բուխարայում հաստատված սելջուկ-քյուրքական խմբավորումը և օղուզ-քյուրքմենական միացյալ զորքերը պարտություն կրեցին Ղազնավյան սուլթան Մուհամմադից: Այստեղից էլ նրանք աստիճանաբար քափանցեցին Արևմտյան Իրան՝ տարածվելով Ջիբրալուս և Ատրպատականում: Խորասանից՝ Իրանի վրայով դեպի Անդրկովկաս և Հայաստանի հարավային գավառներ ներխուժած քյուրքմեն հրոսակների համար Ատրպատականը դարձավ գլխավոր հանգրվան: Այստեղ քափառող օղուզները հաստատվեցին քուրդ ամիրա Վահսուդան իբն Մամյանի մոտ: Հիշ. 429թ. օղուզները մտան Մարաղա, և այրելով մզկիթը՝ նրանք ջարդեցին նաև Հաղբանի քրդերին:

Հեղինակը անդրադառնում է Ատրպատականում և Ջիբրալուս օղուզների ու քրդերի հակամարտություններին:

1040թ. Գանդակյանի ճակատամարտում տարած հաղթանակից և պետության հռչակումից հետո, Տուրքիլ բեկը սելջուկյան հետագա արշավանքների նվաճողական բնույթը քողարկելու համար իր ամենագլխավոր խնդիրը համարեց ուղղափառ սուննիզմի պաշտպանությունը և Աբբասյան խալիֆայությունը իրանական Բուխերից ազատագրելը: Նման քաղաքականությունն առաջացրեց սուննի մահմեդականության համակրանքը:

Ղազնավիներին ջախջախելուց հետո, սելջուկները ծավալում արշավանքներ սկսեցին դեպի Իրան, Իրաք, Անդրկովկաս և Փոքր Ասիա: Այդ երկրների նվաճումը սկզբնական շրջանում իրականացվեց հիմնականում օղուզ և քյուրքմենական աշխարհագորի միջոցով: Արշավանքները կատարվում էին սուլթանի, նրա գլխավոր հրամանատարների կամ նրա ընտանիքի անդամների և քյուրքմեն ցեղապետերի նախաձեռնությամբ:

1041/2թ. Տուրքիլ բեկը մեծաքանակ զորք ուղարկեց Գորգան և Թարաքիստան: 1042թ. Գթըմըշի գլխավորությամբ սելջուկյան

աշխարհագորը գրավեց Ռեյը և այն հայտարարեց իր մայրաքաղաքը: Ջիբալի առանձին շրջանների նվաճումը Տուրքիլի հրամանով իրականացրեց նրա եղբայրը՝ Իբրահիմ Յաննալը (Տուրքիլ բեկի եղբայրը մորական կողմից): Համադանը նա գրավեց հիշ. 434թ. (1042/3թ.): Սակայն սելջուկներն սկզբնական շրջանում Ջիբալում հիմնավոր կերպով չհաստատվեցին: Նահանգի և հարակից շրջանների ամբողջական նվաճումը տեղի ունեցավ մի փոքր սպեկ ուշ՝ հիշ. 437թ. (1045/6թ.) քվականից:

Հիշ. 437(1045/6)թ. սուլթան Տուրքիլ բեկի հրամանով Իբրահիմ Յաննալը Քերմանից շարժվեց Ջիբալ: Սելջուկյան զորքերը գրավեցին Դինավարը և նախապատրաստվեցին հարձակվելու Քերմանշահի վրա, որը մեծ դժվարությամբ գրավեցին 1046թ.: Օղուզական զորամիավորումներն աստիճանաբար տարածվեցին Աննազյան ամիրայության տիրույթներում: Իբրահիմի զերեվալումներն ու ավերածությունները խիստ անհանգստացրեցին քե՛ Բուխերին և քե՛ քրդերին:

1047թ. սելջուկներն աստիճանաբար ներթափանցում են Իրաք՝ Աննազյան տիրույթները քայլ առ քայլ յուրացնելուց հետո: Այդ ամենն սկսեց խիստ անհանգստացնել նաև Բաղդադի արքունիքին, Բուի և արար ամիրաներին, քեև սելջուկների կողմից Աբբասյանների նկատմամբ բացահայտ ոտնձգություններ չէին ձեռնարկվում: Իբրահիմ Յաննալը գրավեց Հասանվայիների Մարմաշ ամրոցն ու Շահրեզուրը, որտեղից փախստաի դիմեց Մուհալիի իբն Աննազը: Թեև օղուզները հանդիպեցին ուժեղ դիմադրության, սակայն նրանց հաջողությունն ողնկցեց, որն արդյունքն էր Աննազյանների միջև ծագած հակամարտության:

Հիշ. 441(1049/50)թ. սելջուկյան եղբայրների՝ Տուրքիլ բեկի և Իբրահիմի միջև սուր վեճեր ծագեցին Ջիբալին տիրելու համար: Սելջուկյան առաջնորդների միջև վեճը հանգեցրեց ռազմական ընդհարումների: Իբրահիմն առաջարկեց Տուրքիլ բեկին հանձնել Ջիբալը: Սակայն, ի վերջո, երկու եղբայրները հաշտվեցին և Տուրքիլ բեկը Իբրահիմին վերադարձրեց նրանից խլված տարածքների մեծ մասը: Աննազյանները, ստիպված էին հաշտվելու տարածաշրջանում օղուզական ռազմական գերիշխանության հետ:

Ատենախոսությունում հանգամանորեն լուսարանվում են Աննազյան քրդերի ներքին հակասությունները, պայքարը ընդդեմ սելջուկյան տիրապետության: Անկարող զանվելով հակահարված տալ սելջուկ-քյուրքական նվաճողներին՝ աստիճանաբար քուրդ ցեղապետերը ծառայության անցան Տուրքիլ բեկի զերատեսչություններում:

Հուլվանում և հարակից շրջաններում Աննազյանների իշխա-

նությունը գոյատևեց շուրջ 130 տարի՝ վերջին շրջանում ենթարկվելով Մեծ սելջուկների աշխարհակալությանը: Առանձին վայրերում նրանց շահավաղները շարունակեցին գոյատևել XII դարում, սակայն երբեք փորձ չկատարեցին իրենց շուրջ համախմբել քրդական ցեղերին:

Աննազյան դինաստիան ավատատիրական ժամանակավոր կազմավորում էր, որը ներքին հակասությունների և սելջուկյան հուժկու հարվածների հետևանքով քայքայվեց և վերացավ պատմության քարտերաքենից:

Ատենախոսությունում քննարկվում են նաև Մարվանյան իշխանության և սելջուկ քյուրքերի փոխադարձ շփումները: Հեղինակն այն կարծիքին է, որ հիջ. 433թ. (1041/2թ.) Գիյար Բաքր և հարավարևմտյան Հայաստանի զավառներ օղուզները մուտք գործեցին Ատրպատականից: Օղուզ հրամանատար Մանսուր իրն Դիզոլիին մտավ Արևելյան Ջազիրա: Նրա հետ կապեր հաստատեց Ջազիրա իրն Օմարի կառավարիչ՝ Մարվանյան Նասր աղ-Գաուլայի որդի Մուլեյմանը: Վերջինս Մանսուրին առաջարկեց դաշնագիր կնքել և օղուզական մյուս խմբերի հետ միասին ձմռանը հարձակվել Ատրիքի (Շամի) վրա: Արաբաքրդական միացյալ զորախմբերը հետապնդեցին օղուզներին: Պարտության մատնված օղուզների որոշ խմբեր մեկնեցին Սինջար և Նիսիբին (Մծբին): Արաբները հեռացան Իրաք և օղուզներն ավերեցին Գիյար Բաքրը, կողոպտեցին և գերեվարեցին: Մարվանյան ամիրա Նասր աղ-Գաուլան հարկադրված եղավ ազատ արձակել իր տղայի՝ Մուլեյմանի կողմից ձեռքակալված օղուզ երամանատարին՝ Մանսուր իրն Դիզոլիին:

Նույն թվականին (1041/2թ.) օղուզական զորախմբերը ներխուժեցին Մոսուլի մարզ, գրավեցին Մոսուլ քաղաքը և հաստատվեցին այստեղ: Լսելով այդ մասին, Տուղրիլ բեկը նամակ գրեց Բուի իշխան Ջալալ աղ-Դինին և Մարվանյան ամիրա Նասր աղ-Գաուլային: Վերջինիս գրած նամակում սելջուկյան սուլթանը խոստանում էր, որ Նասր աղ-Գաուլային գործով կօժանդակի Գիյար Բաքրից օղուզներին դուրս փտարելու համար:

Հիմնվելով Տուղրիլ բեկի՝ Բուի իշխան Ջալալ աղ-Դինին գրած նամակից քաղված ամրապնդումի վրա, ատենախոսության հեղինակը այն միտքն է արտահայտում, որ սելջուկյան արշավանքներին նախորդել էր քյուրքական տարրի մի եզոր ալիք դեպի Գիյար Բաքր: Նման հոսքը նպաստեց սելջուկյան արշավանքների հաջող ընթացքին:

Տուղրիլ բեկն իր արշավանքների նվաճողական բնույթը քողարկելու համար Բուի իշխանին գրեց, որ իբր իր շարժումն ուղղված է անհնազանդ օղուզների դեմ: 1041/2թ. արաբ Ուկայիների ամիրա Կիլվաշը ջախջախեց օղուզներին, որոնք կրկին մեկնեցին Գիյար Բաքր և ստպատակելով մեկնեցին Ատրպատական:

Գիյար Բաքրում և հարակից շրջաններում տեղի ունեցած վերահիշյալ իրադարձությունների մասին Իբն ալ-Ազրակը հաղորդում է մեկ այլ տարբերակ, որն ամբողջությամբ ներկայացվում է ատենախոսությունում: Հեղինակը նշում է, որ ավյալ ժամանակաշրջանում, օգտվելով ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակից, սելջուկներին բռնամարտ արամադրված օղուզներն սկսեցին ձեռնարկել, այսպես կոչված, մասնավոր ասպատակություններ՝ բնակության նոր վայրեր և հարստություն ձեռք բերելու համար: Այդ նպատակն էին հետապնդում Ատրպատականում հաստատված օղուզների ասպատակությունները դեպի հարևան Հայաստան և հարակից այլ շրջաններ:

1048թ. աշնանը Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ սելջուկ-քյուրքերը մեծ արշավանք ձեռնարկեցին դեպի Հայաստան և Բյուզանդական կայսրություն: Գերեվարելով, նրանք հասան Մանազկերտ և այլուր: 1049թ. սելջուկների և կայսրության միջև զինադադար կնքվեց: Հաշտության պայմանագրով Տուղրիլը ժամանակավորապես դադարեցրեց արշավանքներ ձեռնարկել Բյուզանդիայի դեմ: Վերջինս ի վիճակի չէր ճակատ քսելու կայսրության արևելյան սահմաններում: Սելջուկները շարունակում էին իրենց դիրքերն ամրապնդել Իրանում, Իրաքում և այլուր:

1054/5 (հիջ. 446)թ. Տուղրիլ բեկը արշավեց Ատրպատական, մտավ Թավրիզ, որին հնազանդվեց Ռավվադյան Վահսուլանը: Ապա՝ սուլթանին ենթարկվեց Գանձակի Շադադյան Աբու-լ-Ասվարը: Սուլթանին մեծ քանակությամբ նվերներ ուղարկեց Մարվանյան Նասր աղ-Գաուլան: Ամիրան, կաշառելով և հպատակությունը հայանելով, փորձում էր խուսանավել, և առանց ընդհարումների հետ մղել սելջուկներին: Մանազկերտի ամուր պաշտպանությունն ու բնակչության ուժեղ դիմադրությունը՝ հարկադրեց սելջուկյան սուլթանին հետ նահանջելու: Տուղրիլ բեկը մեկնեց Ատրպատական և 1055/6թ. Ռեյից ներխուժեց Բաղդադ:

Արբասյան խալիֆայության մայրաքաղաքը նվաճելուց հետո Տուղրիլ բեկի զորքը մտավ Մոսուլի մարզ և այն խլեց արաբ Ուկայիներից: Ապա շարժվելով դեպի հյուսիս՝ սելջուկյան զորքը 1056/7թ. մտավ Գիյար Բաքր և պաշարեց Մարվանյան տիրույթներից մեկը՝ Ջազիրա իրն Օմարը: Մարվանյան ամիրան՝ Նասր աղ-Գաուլան ստիպված եղավ կրկին դրան տալ իր իշխանությունը պահպանելու համար:

Ատենախոսությունում նշվում է, որ Նասր աղ-Գաուլան դիմում էր դիվանագիտական գանազան քայլերի և, ընդունելով սելջուկների գերիշխանությունը, նրան հաջողվեց ժամանակավորապես իշխանությունը փրկել կործանումից: Հատկանշական է, որ մինչ Նասր

ադ-Դատուայի մեռներ՝ 1061(հիջ.453)թ., սուլթանը համարյա լուրջ փորձեր չկատարեց միջամտելու Մարվանյանների գործերին:

Նասր ադ-Դատուայի մեռնելուց հետո, փաստորեն, իշխանությունը բաժանվեց նրա երկու որդիների՝ Նիզամ ադ-Դինի և Մախդի միջև: Մայրաքաղաք Մայյաֆարիկինում և հարակից շրջաններում իշխեց Նիզամ ադ-Դինը, իսկ Ամիդում՝ Մախդը: Սակայն եղբորը զանգուկեց անելու համար Մախդը դիմեց սուլթան Տուղրիլ բեկին: 1068թ. սելջուկյան զորքը հասավ Մարվանյան մայրաքաղաք և սկսեց ասպատակությունները: Տեղի ունեցած բանակցություններից հետո, Նիզամ ադ-Դինին հաջողվեց 50 հազար դինար կաշառքով հեռուղարկել սելջուկյան զորքին: Նիզամ ադ-Դինը ինչ-որ չափով շարունակեց հոր քաղաքականությունը, բայց նրա օրոք սելջուկներն ավելի հաճախակի փորձեր կատարեցին ներխուժելու Դիյար Բաքր: 1062թ. երկու այլ հրամանատարների հետ Մալար Խորասանը հերքական արշավանքի ժամանակ ներխուժեց Դիյար Բաքրին սահմանակից Չորրոզ Հայքի՝ Պաղինի և Հայաստանի Միջագետքի Թլմուխի շրջանները:

1064թ. Անիի գրավումից հետո, սելջուկներն սկսեցին հաճախ արշավել դեպի Հայկական լեռնաշխարհ ու Փոքր Ասիայի խորքերը: 1066թ. Մալար Խորասանը գրավեց և ավարառության մատնեց Ուռհայի (Եղեսիայի) շրջակայքը: Ըստ Իբն ալ-Ազրակի, նահանջի ճանապարհին նա Դիյար Բաքրում ընկավ ժողովակի մեջ և սպանվեց Մարվանյանների կողմից:

1070թ. Արփ-Արսլանը գրեթե առանց դժվարության գրավեց Մանազկերտը: Ըստ Մ. Ուռհայեցու, Տուղրիլ բեկը Արփ-Արսլանին կաակել էր նվաճել հայկական այդ բնակավայրը և վրեժխնդիր լինել: 1071թ. բյուզանդական կայսր Ռոմանոս Դ-ի զենեղ տարրեր ազգերից կազմած 200-300 հազարանոց զորքով հասավ Մանազկերտ: Խլաթի մոտ տեղի ունեցան քեժ մարտեր: Սուլթանը շուտով Ռոմանոսին առաջարկեց հաշտություն կնքել: Մերժում ստանալով՝ 1071թ. օգոստոսի 19-ին սելջուկները կրկին անցան հարձակման: Դավաճանության հետևանքով բյուզանդական բանակը խայտառակ պարտություն կրեց, և ինքը՝ կայսրը գերի ընկավ: Արփ-Արսլանը վերադարձավ Ատրպատական: Խլաթը և Մանազկերտը խլվեցին Մարվանյաններից: Հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ Մարվանյան զորքը սելջուկյան բանակի կազմում մասնակցեց սելջուկ-բյուզանդական հակամարտությանը: Արփ-Արսլանի կողմից տվյալ տարածքում Մարվանյան ամիրաների գերիշխանությունն սահմանափակելու ուղղությամբ առաջին լուրջ միջոցառումն էր: Սակայն Արփ-Արսլանը նրանց վերադարձրեց Խլաթը: Սելջուկների յուրաքանչյուր քայլ լարված իրադրություն էր ստեղծում Դիյար

Բաքրում, որն էլ հարկադրում էր Մարվանյաններին ինչ-որ ձևով միջոցներ ձեռնարկել՝ գերծ մնալու վտանգից:

1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո գնալով նկատելի դարձավ սելջուկյան սուլթանության ռազմական առավելությունը Բյուզանդիայի նկատմամբ: Դրանից հետո Մարվանյանները մի քանի տարի կարողացան պահպանել իրենց գոյությունը: Սուլթան Մելիք շահի օրոք (1072-1092) սելջուկները որոշեցին վերջ տալ Մարվանյան ամիրայությանը: Սկզբնաղբյուրներում եղած նյութերը ցույց են տալիս, որ այդ գործում չափազանց մեծ դեր խաղաց Մարվանյան ամիրայության երկարամյա նախկին վեզիր, արաբագի Ֆախր ադ-Դատուլա իբն Ջահիրը: Դա տեղի ունեցավ Նիզամ ադ-Դինի որդու՝ Նասիր ադ-Դատուլա Մանսուրի (1080-1085թթ.) տիրապետության ժամանակաշրջանում, որը միացրել էր իշխանության գլխավոր կենտրոնները՝ Ամիդն ու Մայյաֆարիկինը: Նասիր ադ-Դատուլա Մանսուրից բավական դժգոհ էր սուլթան Մելիքշահի դիվանը: Հեղինակը մասնաժամանակ նկարագրում է այդ ժամանակաշրջանում ամիրայությունում տիրող իրադրությունը, ռազմաքաղաքական անցուղարձերը, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան ամիրայության կյանքում: 1085 թ. Իբն Ջահիրի գլխավորությամբ Սելջուկյան մեծարանակ զորքը մտավ Դիյար Բաքր՝ միաժամանակ պաշարելով Ամիդն ու Մայյաֆարիկինը: Երկար դիմադրությունից հետո, 1085 թ. մայիսին, հանձնվեց Ամիդը: Նույն թվականի օգոստոսին ընկավ նաև Մայյաֆարիկինը: Այլա՝ հետզհետե Իբն Ջահիրի գլխավորած սելջուկյան զորքերը նվաճեցին ողջ Դիյար Բաքրը: Մարվանյան ամիրային սուլթանն արտրեց Իրաք և որպես կալվածք նրան տվեց Բաղդադի վերևում գտնվող Հաքրա գյուղը:

Առեմախտությունում նշվում են ամիրայության կործանման մի քանի պատճառներ: Նախ, Մարվանյան ամիրայությունը բաղկացած էր հիմնականում Մայյաֆարիկինի, Ամիդի, Խլաթի, Բաղեշի, Ջազիրա իբն Օմարի շրջաններից: Տարածքն ուներ ռազմավարական խիստ կարևոր նշանակություն, և այնտեղ Մարվանյանների առկայությունը տվյալ ժամանակաշրջանում արդեն լրջորեն խանգարում էր սելջուկներին՝ իրենց ռազմական ծրագրերը իրագործելու համար: Բացի այդ, Դիյար Բաքրը և նրա գլխավոր քաղաքները՝ Մայյաֆարիկինը, Ամիդը, Խլաթն ու Բաղեշը գտնվում էին հիմնական երկու մայրուղիների հանգուցակետերի վրա, որոնք կապում էին մի կողմից Իրանը Տրապիզոնի և Սիևոպի վաճառական նավահանգիստների՝ և մյուս կողմից Բյուզանդիայի կենտրոնական և արևմտյան նահանգների, այդ թվում Կ. Պոլսի հետ: Դրա հետ միասին, տարածքի ռազմավարական նշանակությունը գնալով մեծանում էր Մելիքշահի հակառակորդ Անատոլիայի Սուլեյմանի հիմնած

սուրբանությանը վերջ ապու համար: Ուստի, Սելիքշահն իր ծավալապաշտական նկրտումներն իրագործելու ճանապարհին երկու խոչընդոտ ուներ՝ Մասուլի, Ջազիրայի և Հաբեպի տիրակալ Ռուկայի Շարաֆ ադ-Դաուլայի և Դիյար Բաքրի Մարվանյանների տիրույթները: Պատահական չէ, որ սուրբանի դիվանը և վեզիր Նիզամ ալ-Մուլքը իսկույն հավանություն ավեցին Ֆախր ադ-Դաուլա իբն Ջահիրի առաջարկին և դիմեցին գործնական քայլերի:

Ամփոփելով՝ հեղինակը գտնում է, որ XI դ. 40-50-ական թթ. Մերձավոր և Միջին Արևելքում սելջուկ-թյուրքերի ի հայտ գալով վերափոխվեց ամբողջ տարածքի քաղաքական քարտեզը: Արբաայան խալիֆայությունը դեռևս X դ. 40-ական թթ. սկսել էր քայքայվել, իսկ Բյուզանդական կայսրությունը ներքին խնդրումների և տարբեր ճակատներում մղած պատերազմների հետևանքով խիստ թուլացել էր և դիմում էր դեպի մայրամուտ: Ողջ տարածքում մասնավաճության քառուրդ ամենուրեք ուղեկցվում էր մշտական ռազմական բնդիարումներով: Բնականաբար նման պայմաններում Մարվանյան, այդ թվում քրդական մյուս իշխանությունները, ի վիճակի չէղան երկար դիմադրելու և մեկը մյուսի հետևից անկում ապրեցին:

Ատենախոսության մույն գլխում հեղինակը եղած նյութերի հիման վրա անդրադառնում է Մարվանյան ամիրայության սոցիալ-տնտեսական կյանքին: Բննարկման առարկա են դարձել մասնավորապես Մարվանյան իշխանության կառուցվածքը և իշխանության ինստիտուտները: Ուսումնասիրության նյութ է դարձել հաակապես „վակի“, ավատատիրական ձևը: Եղած նյութերի հիման վրա հեղինակը ամրադարձել է Մարվանյան ամիրայության շինարարական գործունեությանը, որը սկիզբ է առել դեռևս Բաղի օրոք:

Մարվանյան ամիրայության շինարարական բուռն գործունեությունը սերտորեն կապված է Նասր ադ-Դաուլա ամիրայի անվան հետ: Եթե իր նախորդների շինարարական գործունեությունն սահմանափակվեց Մայյաֆարիկինի պարսպի վերանորոգմամբ և գմբեթավոր դամբարանների կառուցմամբ, ապա նա ձեռնարկեց մի քանի այլ կառույցների շինարարությունը: Նրա անվան հետ է կապված Մայյաֆարիկինի ամենախոշոր կառույցներից մեկը՝ Մարվանյան պալատը:

Նասր ադ-Դաուլայի իշխանության շուրջ 50 տարիները համեմատաբար խաղաղ էին և նրան հաջողվել էր քիչ թե՛ շատ բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ: Այդ ընթացքում նա զգալի ուշադրություն դարձրեց անրաշինությունների վրա:

Մարվանյանների անվան հետ է կապված կամուրջների,

մզկիթների և մահմեդական այլ շինությունների կառուցումը:

Մարվանյան իշխանության կառույցներն ու վերանորոգած շինությունների մի մասի ծախսերը, ինչպես երևում է Իբն ալ-Ազրակի շարադրանքից, կատարվում էին ամիրաների սեփական միջոցներով, իսկ մի մասն էլ՝ վակիֆից ստացված եկամուտների հաշվին:

Մարվանյան ամիրաների շինարարական գործունեության վերաբերյալ Իբն ալ-Ազրակի մեզ հասած տվյալները այս կամ այն չափով հաստատվում են գիտական հրապարակի վրա եղած արարներն վիճակի նյութերով:

Ինչպես դժվար չէ նկատել, դրանով Մարվանյան ամիրաներն ամենից առաջ ջանում էին ավյալ տարածքում՝ Դիյար Բաքրում ուժեղացնել իրենց քաղաքական և տնտեսական կշիռը, ինչպես նաև ամրապնդել դինաստիայի դիրքերը և ապահովել նրա պաշտպանությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ մեջ հանրագումարի են բերվում ատենախոսության հիմնական հետևությունները:

Ատենախոսության բնդիանուր դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա. մենագրական աշխատանքներ.

1. Курды в VII-X веках по арабским источникам, Ереван, 1987 (п.л. 8.25).
2. Kurtler, Ankara, 1991. (թուրքերեն, 7 տպ. մամուլ)
3. Զրդերը քստ արարական աղբյուրների, Բեյրութ, 1995 թ., (արարերեն, 11 տպ. մամուլ):

բ. հոդվածներ և քեզեր.

1. Քրդական ցեղերը VII-X դդ. (քստ արարական աղբյուրների), Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 6, 1984, էջ 71-77:
2. Համահեղինակ Գ. Ասատրյան, Եզդիների դավանանքը հիմնական աստվածությունները. սուրբ գրքերը), ՊԲՀ, թիվ 4, 1989, էջ 131-150:
3. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, XI, արարական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, քարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, ՊԲՀ, թիվ 4 (99), 1982, էջ 189-192 (գրախոսություն):
4. Զրդերի արարական ծագման միջնադարյան վարկածի շուրջ, - Երիտասարդ արևելագետների VII գիտական մատաչքանի քեզեր, Երևան, 1981, էջ 20-21:

5. IX-X դդ. Ֆարս նահանգում քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի մի քանի հարցերի շուրջ (ըստ արաբական աղբյուրների), Երիտասարդ արևելագետների VIII գիտական նստաշրջանի թեզեր, Երևան, 1982, էջ 35-36:
6. Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածի շուրջ, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XV, Երևան, 1989թ., էջ 287-299:
7. „Բուրդ „ հասկացության սոցիալ-էթնիկական նշանակությունը արաբական աղբյուրներում, Երիտասարդ արևելագետների IX նստաշրջանի թեզեր, Երևան, 1983, էջ 26-28:
8. Արաբական խալիֆայությունում քրդերի տեղաշարժերի մի քանի դրոպապատճառների մասին, Երիտասարդ արևելագետների XI նստաշրջանի թեզեր, Երևան, 1985, էջ 21-22:
9. Մարվանյան ամիրաների շինարարական գործունեությունը, Երիտասարդ արևելագետների XII նստաշրջանի թեզեր, Երևան, 1986, էջ 20-21:
10. Մարվանյան ամիրայության ավատատիրական հողատիրության մի քանի ձևերի մասին (ըստ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի), Երիտասարդ արևելագետների XIII նստաշրջանի թեզեր, Երևան, 1987, էջ 21-22:
11. Իսլամի տարածումը քրդերի մեջ VII-X դդ. (ըստ արաբական աղբյուրների), - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIII, Երևան, 1985, էջ 156-173:
12. Քրդերի ռազմարադարական անցքերը Արաբատականում X դ. առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների), ՊԲՀ, II (105), 1984, 87-92:
13. Մարվանյան դինաստիան և Մեծ սելջուկները, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Երևան, 1996թ., էջ 166-185:
14. Курдская династия Марванидов и ее взаимоотношения с мусульманскими эмиратами. - Проблемы современной советской арабистики, II, проблемы истории и филологии, Ереван, 1990, с.90-96.
15. Хачатрян А., корпус арабских надписей Армении VIII-XVI вв, вып. I, „Լրագրեր հասարակական գիտությունների,, , թիվ 6, Երևան, 1989, էջ 89-92.

16. Курдская династия Марванидов и ее взаимоотношения с мусульманскими эмиратами (вторая пол. X в.), - „ IV Всесоюзная конференция арабистов,, тез. докладов и научных сообщений, Ереван, 1985, с. 105-107.
17. К истории распространения ислама среди курдов.- Вторая Всесоюзная школа молодых востоковедов: тез., т. I, ч. I, История, политика, источниковедение, международные отношения, М-а, 1982, п. 63-64.
18. The Islamization of the Kurds (7 th- 10 th Centuries A.D.),- Acta Kurdica, v. I, 1994, London, p. 21-27.

А.П. ПОЛАДЯН

КУРДЫ В ЭПОХУ АББАСИДСКОГО ХАЛИФАТА
X-XI ВВ
(Резюме)

История курдов в X-XI вв. по праву считается составной частью истории подвластных Аббасидскому халифату стран и народов. Являясь одним из самых интересных периодов арабо-мусульманской истории, он ознаменовался бурными военно-политическими событиями и глубокими социально-экономическими переменами.

Период, в частности, характеризуется тем, что, массово принимая ислам, курдские племена под руководством феодальной верхушки впервые сделали попытку относительного объединения. Благодаря этому на исторической арене появились несколько независимых и полунезависимых курдских династий-временных феодальных структур, явившихся результатом определенных военно-политических условий.

Другой основной особенностью изучаемой эпохи является то, что курдская верхушка, проявившая серьезные намерения укрепить свои политические и экономические позиции и расширить сферу своего влияния в разных областях халифата, практически полностью перешла на

службу исламу, способствуя этим не только новым миграциям соплеменников, но и их вовлечению в сферы так называемой арабо-мусульманской общественно-политической и культурной жизни.

Подобная беспрецедентная и мощная активизация курдских племен в X-XI вв. прежде всего тесно связана с тем глубоким военно-политическим и социально-экономическим кризисом на Ближнем и Среднем Востоке, который еще с середины IX века начало переживать Аббасидское государство. Возникшие в упомянутую эпоху в разных областях халифата крупные народные движения, антиарабская и антифеодалная борьба, а также сепаратистские устремления местных правителей и феодальная эксплуатация, а вследствие этого - крайнее расслоение общества, подорвали позиции арабского господства.

Тем не менее, длительная антиаббасидская борьба подвластных, в особенности иранских народов, под знаменем шиизма в IX-X веках, увенчалась значительным успехом. После завоевания Багдада иранскими Буидами в 945 году Аббасидское государство примерно в течение двух столетий было лишено политического господства, и на бескрайних просторах восточного халифата признавалась только его духовная власть.

Активизация иранского элемента дала также толчок началу военно-политических действий курдских племен в различных областях халифата. Начиная с этого периода и до XI века (появление турок-сельджуков на Ближнем и Среднем Востоке) курды в результате стечения ряда исторических обстоятельств установили действенные политические контакты с мусульманскими эмиратами, приобретя в отдельных местах некоторую политическую самостоятельность.

В 20-30-ых годах XI века на Восточный халифат из глубин Средней Азии началось мощное наступление тюркских племен: кочевников-огузов, которое в 40-ых годах того же века подготовило почву для разрушительных походов турок-сельджуков. Появление и долговременное господство на Ближнем и Среднем Востоке турок-сельджуков сыграло судьбоносную роль в жизни стран и народов региона.

Этот интересный, но одновременно сложный период в истории курдов до сих пор не становился серьезным предметом исследования со стороны востоковедов. В опубликованных на восточных и европейских языках трудах освещаются, в основном, проблемы новой и новейшей истории курдов. Это прежде всего объясняется тем, что до сих пор в необходимой мере не изучались различные первоисточники, проливающие свет на историю курдов в средние века.

Изучение истории курдов X-XI вв. само по себе интересно и с научно-практической точки зрения: для наиболее точного комментирования исторических предпосылок сегодняшних бурных событий, общественно-политических и социально-экономических процессов, происходящих в ближневосточном регионе.

Тема очень актуальна не только в части обозначения этапов развития истории курдов, но и объективной оценки и освещения стоящих на повестке дня современных курдских проблем в странах Ближнего Востока.

Хронологические рамки работы охватывают приблизительно двухсотлетнюю историю - с первой половины X века по конец XI века - эпоху владычества Великих Сельджуков. Она полностью соответствует периодизации средневековой истории стран и народов Ближнего и Среднего Востока.

Подавляющее большинство дошедших до нас материалов по этой теме относится к военно-политическим событиям, отображенным, главным образом, в средневековых арабоязычных исторических, географических и других источниках, значительная часть которых не была использована наукой.

В данной работе в первые на фоне развития военно-политических событий, кроме различных исторических проблем, исследуется история трех курдских династий; Хасанвайхидов, Анназидов и Мерванидов. Этот выбор не случаен, поскольку было учтено то обстоятельство, что этнический элемент данных династий состоял в основном из курдских племен. Помимо прочего, были учтены те географические территории, которые курды продолжают населять по сей день.

Для анализа сообщений арабоязычных первоисточников на общем фоне истории Ближнего и Среднего Востока были использованы труды армянских, русских, европейских и восточных историков-востоковедов.

*Диссертация представлена:
на соискание ученой степени
доктора исторических наук*

ARSHAK POLADIAN
THE KURDS
IN THE PERIOD OF ABBASSID CALIPHATE
(X -XI th CENTURIES)

Ch. ерт